

այս աղօթքին մէջ պիտի կատարուի թէ՛ ողջ եղած ատեն եւ թէ մահէն ետք: Իսկ անոնք որոնք կ'արհամարհեն եւ չեն սորվիր եւ չեն աղօթեր, իրենք անձամբ պիտի տեսնեն իրենց անձերուն վնասը եւ իրենց պատիժը պիտի կրեն:

Պատճառանկները մեր մէջէն վերցնելու համար գրեցինք այս աղօթքները, որպէս զի այլեւս պատճառ չընեն թէ չենք հասկնար աղօթքին խօսքերը, այդ պատճառով չենք գար աղօթելու:

Բայց թող գիտնան այսպիսի մարդիկ, որ սատանան այնչափ չի ջանար մեր բարի գործերը խափանելու, որչափ մեր աղօթքները, որովհետեւ գիտէ որ միայն աղօթքով է որ ինք կը հալածուի մեր կողմէ, եւ Աստուած կը բնակի մեր մէջ: Ուրեմն՝ մենք կ'աղաչենք բարեբար Աստուծմէ որ բանայ ձեր մտքի աչքերը, յօժարութեամբ սորվելու այս աղօթքը, եւ աղօթելու, եւ Աստուծոյ սիրելի դառնալու:

Եւ աղօթելու ատեն յիշեցէ՛ք Քրիստոսի անունով Հայոց Գրիգորիս Կաթողիկոսը, եւ անոր եղբայրը՝ Ներսէսը, այս աղօթքները յօրինողը:

Եւ դուք որ կ'ընդօրինակէք աղօթքները գրեցէ՛ք խրատական այս խօսքերը եւս: Եւ անոնք որոնք կը գրեն ասիկա թող յիշուին յաւիտեանական կեանքի դպրութեան մէջ:

Եւ անոնք որոնք կը սորվին եւ կ'աղօթեն, Քրիստոսէ ողորմութիւն թող ընդունին:

Եւ անոնք որոնք կը սորվեցնեն իրենց ընկերներուն թող վարձատրուին Աստուծմէ:

Եւ անոնք որոնք կը գրեն, թող չի խառնեն խօսք կամ գիր այս օրինակէն աւելի, եւ ոչ ալ պակաս գրեն, որպէս զի խօսքերը իրարմէ տարբեր չըլլան, այլ որպէս զի ամէնքն ալ նոյնը ըլլան ուր որ ալ գրուին:

Եւ գրելու մէջ տխմար եղողները նիշտ գրել գիտցողներուն թող գրել տան: Եւ փառք ըլլայ Քրիստոսի յաւիտեանս: ամէն:

Թրգմն. Ն. Նազգաշեան

ԱՂՕԹՔ ԻԻՐԱՔԱՆՁԻԻՐ ԱՆՁԻՆ  
Հաւատացելոյ Ի Քրիստոս


Զոր Արարեալ է Սրբոյ Տեառն Ներսիսի Հայոց Կաթողիկոսի

ՀԱԻԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ

1.-- Հաւատով խոստովանիմ եւ երկիր պագանեմ քեզ, Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի, աննդ եւ անմահ բնութիւն, արարիչ հրեշտակաց եւ մարդկան եւ ամենայն եղելոց. ողորմեա քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

«Հաւատով խոստովանիմ» ու կ'երկրպագեմ քեզի, Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի, աննդ եւ անմահ բնութիւն. արարիչ հրեշտակներու եւ մարդոց եւ բոլոր ստեղծուածներուն. ողորմէ՛ քո արարածներուդ եւ ինձ՝ բազմամեղիս:

With faith I confess and worship Thee, Father, and Son, and Holy Spirit, uncreated and immortal nature, creator of angels and of Men, and of all beings; have mercy upon Thy creatures and upon me a great sinner.



2 -

Հաւատով խոստովանիմ եւ երկիր պագանեմ քեզ, անբաժանելի լոյս, միասնական Սուրբ Երրորդութիւն եւ մի Աստուածութիւն, արարիչ ուսոյ եւ հալածիչ խաւարի. հալածեալ ի հոգոյ մմէ՛ զխաւար մեղաց եւ անգիտութեան, եւ ուստրեալ զմիտս իմ ի ժամուս յայսմիկ՝ սղօթել քեզ ի հաճոյս եւ ընդունիլ ի քէն լինդրուածս իմ. եւ ողորմեալ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

«Հաւատով խոստովանիմ» ու կ'երկրպայեմ քեզի, անբաժանելի՛ լոյս, միասնական Սուրբ Երրորդութիւն եւ մի Աստուածութիւն, արարիչ լոյսի եւ հալածիչ խաւարի, հալածել մ հոգիէս խաւարը մեղքերու եւ անգիտութեան, և լուսաւորել՝ իմ միտքս՝ որ այս ժամուս քեզի սղօթք մատուցանեմ հաճոյական, եւ խընդանքներս ընդունիմ քեզմէ. եւ ողորմել՝ քո արարածներուդ եւ ինձ՝ բազմամեղիս:

With faith I confess and worship Thee, indivisible Light, the united holy Trinity and one Godhead, creator of light and dispeller of darkness, drive away from my soul the darkness of sin and ignorance, and enlighten my mind at this hour, that I may offer unto Thee acceptable prayers, and obtain of Thee the fulfilment of my desires; have mercy upon Thy creatures and upon me a great sinner.

3 -

Հայր երկնաւոր, Աստուած ճշմարիտ, որ առաքեցեր զՈրդիդ քո սիրելի ի խնդիր մուտրեալ ոչխարին, մեղայ յերկինս եւ առաջի քո. ընկալ զիս որպէս զանառակ որդին, եւ զգեցո ինձ զպատմումանն զառաջին, զոր մերկացայ մեղօք. եւ ողորմեալ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Հա՛յր երկնաւոր, Աստուա՛ծ ճշմարիտ, որ զրկեցիր քու սիրելի Որդիդ ի խնդիր մուտրեալ ոչխարին, մեղանշեցի՛ երկնքի դէմ եւ քո՛ւ առջեւ. ընդունէ՛ զիս՝ ինչպէս որդին անառակ, եւ հագունեցո՛ւր ինձ պատմումանս նախկին, որմէ՛ մերկացայ մեղքերուս պատճառով. եւ ողորմել՝ քո արարածներուդ եւ ինձ՝ բազմամեղիս:


Heavenly Father, true God, who didst send Thy beloved Son to seek after the wandering sheep, I have sinned against heaven and Thy sight; receive me as the prodigal son, and clothe me again with the former garment which I have put off through sin; have mercy upon Thy creatures and upon me a great sinner.

4 -

Որդի Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, որ խոնարհեցար ի հայրական ծոցոյ եւ առեր մարմին ի սրբոյ Կուսէն Մարիամայ՝ վասն մերոյ փրկութեան. խաչեցար, թաղեցար եւ յարեար ի մեռելոց, եւ համբարձար փառօք առ Հայր. մեղայ յերկինս եւ առաջի քո, յիշեա զիս որպէս զառազակն՝ յորժամ զաս արքայութեամբ քով. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Որդի՝ Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, որ խոնարհեցար հայրական ծոցէն ու մարմին առիւր Սուրբ Կոյս Մարիամէն՝ մեր փրկութեան համար, դուն խաչուեցար ու թաղուեցար եւ մեռելներէն յարութիւն առիւր ու փառքով համբարձար Հօրդ քով. մեղանչեցի՝ երկնքի դէմ եւ քու առջեւ, յիշէ՛ զիս ալ, առազակն ինչպէս, երբ գալու ըլլաս քու արքայութեամբդ. եւ ողորմէ՛ քու արարածներուդ եւ ինձ՝ բազմամեղիս:

Son of God, true God, who descended from the bosom of the Father and took flesh from the holy Virgin Mary for our salvation, who wast crucified and buried, and didst rise from the dead and ascend with glory to Thy Father; I have sinned against heaven and Thy sight, remember me as Thou didst the first factor, when Thou shalt come in Thy kingdom, have mercy upon Thy creatures and upon me, a great sinner.



5 -

Հոգի Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, որ իջեր ի Յորդանան եւ ի վերնատունն, եւ լուսաորեցեր զիս մկրտութեամբ սուրբ աւազանին. մեղայ յերկինս եւ առաջի քո, մաքրեա զիս վերստին աստուածային հրով քո որպէս հրեղէն լեզուօք սուրբ զառաքեալսն. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Հոգի՛ Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, որ իջար Յորդանան եւ վերնատունը, եւ լուսաորեցիր զիս մկրտութեամբ սուրբ Աւազանին. Տեղանչեցի՛ երկնքի դէմ եւ քու առջեւ, մաքրէ չիս, Տէ՛ր, վերստին՝ աստուածային քու լրակով, ինչպէս մաքրեցիր առաքեալները՝ լրակէ լեզուներով. եւ ողորմէ՛ քու արարածներուդ եւ ինձ՝ բազմամեղիս:

Spirit of God, true God, who descendedst in the river Jordan and in the Upper chamber, and didst illumine me by the baptism of the holy font; I have sinned against heaven and in Thy sight, cleanse me again with Thy divine fire, as Thou didst purify with fiery tongues the holy apostles; have mercy upon Thy creatures and upon me a great sinner.

6 -

Անեղ բնութիւն, մեղայ քեզ մտօք իմովք, հոգւով եւ մարմնով իմով. մի՛ յիշեր զմեղս իմ զառաջինս՝ վասն անուանդ քում սրբոյ. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Անե՛ղ բնութիւն, մեղանչեցի քեզի դէմ՝ մտքովս, հոգիովս ու մարմնովս. մի՛ յիշեր մեղքերս իմ նախկին՝ ի սէր քու սուրբ անունիդ. եւ ողորմէ՛ քու արարածներուդ եւ ինձ՝ բազմամեղիս:

Nature uncreated, I have sinned against Thee with my mind, with my soul and body; remember not my former transgressions for the sake of Thy holy name; have mercy upon Thy creatures and upon me a great sinner.

7 -

Տեսնող ամենայնի, մեղայ քեզ խորհրդով,  
բանի եւ գործով. ջնջեա՛ զձեռագիր յանցանաց  
իմոց եւ զրեա զանուն իմ ի դպրութեան կենաց.  
եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ՝ բազմա-  
մեղիս:

Տեսնող ամէն բանի, մեղանչեցի՛ քեզի  
դէմ՝ մտածութեամբ, խօսքով ու գործով. ջնջէ՛  
ձեռագիրն իմ յանցանքներուս, եւ անունս իմ  
գրէ կենաց գիրքին մէջ. եւ ողորմէ՛ քու արա-  
րածներուդ եւ ինձ՝ բազմամեղիս:

Seer of all things, I have sinned against Thee  
in thought, word and deed; wipe the record of  
my misdeeds, and write my name in the book  
of life; have mercy upon Thy creatures and upon  
me a great sinner.

8 -

Քննող գաղտնեաց, մեղայ քեզ կամ  
ակամայ, գիտութեամբ եւ անգիտութե-  
թողութիւն շնորհեա մեղաւորիս՝ զի ի ծնե-  
ստրբ աւագանին մինչեւ ցայսօր մեղոցեա  
առաջի աստուածութեանդ քո զգայարս  
իմովք, եւ ամենայն անդամօք մարմնոյ  
ողորմեա քո արարածոց եւ ինձ՝ բազմամե-

Քննող գաղտնի իրերու, մեղայ  
քեզի դէմ՝ կամելով եւ ակամայ, գիտութե-  
եւ անգիտակցօրէն. թողութիւն շնորհէ՛ ձե-  
տրիս, որովհետեւ Աւագանի ծնունդէս  
այսօր մեղանչած եմ Աստուածութեանդ  
զգայարանքներովս ու մարմնիս բոլոր ա-  
նքներով. եւ ողորմէ՛ քու արարածներուդ եւ  
բազմամեղիս:


Searcher of secrets, I have sinned against  
Thee wilfully and unintentionally, knowingly  
and ignorantly. grant forgiveness to me a  
sinner for, from my baptismal birth till this  
day. I have continually sinned before Thy  
divine majesty by my senses and by my  
members of my body; have mercy upon Thy  
creatures and upon me a great sinner.

9 -

Ամենախնամ Տէր, դի՛ր պահապան աչաց իմոց՝ զերկիւղ քո սուրբ՝ ո՛չ եւս հայիլ յայրատ. եւ ականջաց իմոց՝ ո՛չ ախորժել լսել զբանս չարութեան, եւ բերանոյ իմոյ՝ ո՛չ խօսել զստութիւն, եւ սրտի իմոյ՝ ո՛չ խորհել զչարութիւն, եւ ձեռաց իմոց՝ ո՛չ գործել զանիրաւութիւն, եւ ոտից իմոց՝ ո՛չ գնալ ի ճանապարհս անօրէնութեան, այլ ուղղեա զշարժումն սոցա լինել միշտ ըստ պատուիրանաց քոց յամենայնի. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Ամենախնամ Տէր, դի՛ր պահապան քու սուրբ երկիւղ աչքերոս՝ որ չնայիմ արատատր բաներու, ականջներոս՝ որ չախորժին լսել խօսքեր չարութեան, բերանիս՝ որ պէտզի սուտ չխօսի, ու սրտիս՝ որ չխորհի չարութիւն, եւ ձեռքերոս՝ որ չգործեն անիրաւութիւն, եւ ոտքերոս՝ որ չքալեն անօրէնութեան ճանապարհէն. այլ ուղղէ՛, Տէ՛ր, շարժումն ասոնց, որ միշտ հետեւին քու պատուէրներոյ. եւ ողորմէ՛ քու արարածներոյ եւ ինձ՝ բազմամեղիս:

All-provident Lord, place Thy holy fear as a watch before mine eyes, so as not to cast an evil glance; and before mine ears, so as not to desire to hear evil words; and before my mouth, so as not to speak a lie; and before my heart, so as not to think evil; and before my hands, so as not to commit an unjust act; and before my feet, so as not to walk in the paths of lawlessness; but do Thou direct the movements of my body to be in every respect according to Thy commands; have mercy upon Thy creatures and upon me a great sinner.



10 -

Հուր կենդանի Քրիստոս, զհուր սիրոյ քո  
զոր արկեր յերկիր՝ բորբոքեա յանձն իմ, զի  
այրեսցէ զաղտ հոգւոյ իմոյ, եւ սրբեսցէ զխիղճ  
մտաց իմոց, եւ մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ,  
եւ վառեսցէ զլոյս գիտութեան քո ի սրտի իմում.  
եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ՝ բազմա-  
մեղիս:

Հո՛ւր կենդանի՛ Քրիստո՛ս, բորբոքէ իմ  
մէջ հուրը քու սիրոյդ՝ զոր դուն երկիր ձգեցիր,  
որպէսզի այրէ աղտն հոգիիս, եւ մաքրագործէ  
խղճմտանքս իմ, եւ ջնջէ մեղքերն իմ մարմնիս,  
ու սրտիս մէջ՝ քու գիտութեանդ լոյսը վառէ. եւ  
ողորմէ՛ քու արարածներուդ եւ ինձ՝ բազմա-  
մեղիս:

O Christ, Thou living fire, stir up in my soul  
the fire of Thy love which Thou didst shed upon  
the earth, that it may burn the impurities of my  
soul and cleanse my conscience and purge the  
sins of my body, and kindle the light of Thy  
knowledge in my heart; have mercy upon Thy  
creatures and upon me a great sinner.

11 -

Իմաստութիւն Հօր՝ Յիսուս, տուր  
իմաստութիւն զբարիս խորհել եւ խօսել  
գործել առաջի քո յամենայն ժամ. ի  
խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալ  
եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ՝ բազմա-  
մեղիս:

Իմաստութիւն Հօր՝ Յիսու՛ս, իմաստ  
թիւն տուր ինձի՛ որ քու դիմաց միշտ բար  
խորհիմ, խօսիմ ու գործեմ. եւ փրկէ զիս  
խոհերէն, չար խօսքերէն ու գործերէն.  
ողորմէ՛ քու արարածներուդ եւ ինձ՝ բազմա-  
մեղիս:

Wisdom of the Father, O Jesus, give  
wisdom always to think, speak and do  
which is good in Thy sight; save me from  
thoughts, words and deeds; have mercy upon  
Thy creatures and upon me a great sinner.

12 -

Կամեցող բարեաց Տէր կամարար, մի՛ թողուր զիս ի կամս անձին իմոյ զնալ, այլ առաջնորդեա ինձ լինել միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Բարի՛ն կամեցող, Տէ՛ր կամակատար, մի՛ թողուր որ սեփական կամքովս քալեմ, այլ առաջնորդ եղիր ինձի՛ որ միշտ բարեսէր կամքիդ ճետելիմ. եւ ողորմէ՛ քու արարածներուդ եւ ինձ՝ բազմամեղիս:

Benevolent Lord, who fulfillest all desires, do not let me go astray after mine own longings, but guide me always to walk according to Thy holy will; have mercy upon Thy creatures and upon me a great sinner.

13 -

Արքայ երկնաւոր, տուր ինձ զարքայութիւն քո՝ զոր խոստացար սիրելեաց քոց. եւ զօրացո զսիրտ իմ ատել զմեղս եւ սիրել զքեզ միայն եւ առնել զկամս քո. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Արքա՛յ երկնաւոր, տուր ինձի քու արքայութիւնդ՝ որ խոստացար սիրելիներուդ, եւ զօրացո՛ւր իմ սիրտս՝ որ մեղքը ատեմ, քեզ միայն սիրեմ եւ քու կամքդ կատարեմ. եւ ողորմէ՛ քու արարածներուդ եւ ինձ՝ բազմամեղիս:

Heavenly King, grant me Thy kingdom which Thou didst promise to Thy beloved ones, and strengthen my heart to despise sin and to love Thee alone, and to do Thy will; have mercy upon Thy creatures and upon me a great sinner.

14 -

Խնամող արարածոց՝ պահեա նշանաւ  
խաչի քո զհոգի եւ զմարմին իմ ի պատրանաց  
մեղաց, ի փորձութեանց դիւաց, եւ ի մարդոց  
անիրաւաց, եւ յամենայն վտանգից՝ հոգւոյ եւ  
մարմնոյ. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ՝  
բազմամեղիս:

Խնամող արարածներու, խաչիդ նշանով  
պահպանէ հոգիս ու մարմինս մեղքի պատ-  
րանքներէն, դէտքու փորձութիւններէն, անիրաւ  
մարդերէն, եւ հոգիի ու մարմնի բոլոր վտանգ-  
ներէն. եւ ողորմէ՛ քու արարածներուդ եւ ինձ՝  
բազմամեղիս:

Protector of Thy creatures, protect with the  
sign of Thy cross my soul and my body from  
the wiles of sin, from the temptations of the devil  
and from unjust men, and shield me from all  
perils of the soul and body; have mercy upon  
Thy creatures and upon me a great sinner.

15 -

Պահապան ամենայնի Քրիստոս, աչ  
հովանի լիցի ի վերայ իմ՝ ի տուէ եւ ի գիշեր  
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ, ի նկ  
եւ ի յառնել, զի մի՛ երբէք սասանեցայք  
ողորմեա քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Պահապան ամէն բանի, Քրիստոս, աչ  
աչ ձեռքդ թող ըլլա՛յ ինձ հովանի, ամէն գիշեր  
ու ցերեկ, երբ տունը կենամ կամ ճամբայ ելլե՛մ  
երբ քուն ըլլամ կամ արթուն, որ եւ երբ  
չսասանիմ. եւ ողորմէ՛ քու արարածներուդ  
ինձ՝ բազմամեղիս:

Guardian of all mankind, O Christ,  
Thy right hand overshadow me by day and  
night, while sitting at home and while going  
on my way, in sleep and in waking, that  
I may never be dismayed; have mercy upon  
Thy creatures and upon me a great sinner.

16 -

Աստուած իմ, որ բանաս զձեռն քո եւ լնուս զամենայն արարածս ողորմութեամբ քով, քեզ յանձն առնեմ զանձն իմ. դո՛ւ հոգա եւ պատրաստեա զպէտս հոգւոյ եւ մարմնոյ իմոյ յայսմհետէ մինչեւ յաւիտեան. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Աստուած իմ, դուն որ ձեռքդ կը բանաս եւ ողորմութեամբդ կը լիացնես արարածները բոլոր, քեզի կը յանձնեմ ինքզիմքս. դո՛ւն հոգա եւ գոհացո՛ւր կարիքներն իմ հոգիս ու մարմնիս, այսուհետեւ մինչեւ յաւիտեան. եւ ողորմէ՛ քու արարածներուդ եւ ինձ՝ բազմամեղիս:

O my god, who openest Thy hand and fillest all Thy creatures with Thy mercy, I surrender myself unto Thee; do Thou care for me and provide the necessities of my body and soul henceforth and evermore; have mercy upon Thy creatures and upon me a great sinner.

17 -

Դարձուցի՛չ մոլորելոց, դարձո զիս ի շար սովորութեանց իմոց Ի բարի սովորութիւն, եւ բեւեռեա ի հոգի իմ զսուկալի օր մահուն, եւ զերկիւղ զեհեհոյն, եւ զսէր արքայութեանն զի զղջացայց ի մեղաց եւ գործեցից զարդարութիւն. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Դարձ պարզելոյ մոլորեալներուն, դարձի բեր զիս ալ՝ իմ շար բարքերէն դէպի բարի սովորութիւն, ու բեւեռէ՛ հոգիս մէջ սուկալի օրը մահուան, եւ երկիւղը դժոխքին, եւ սէրը քու արքայութեանդ, որպէսզի զղջամ իմ մեղքերուս համար եւ արդարութիւն գործեմ. եւ ողորմէ՛ քու արարածներուդ եւ ինձ՝ բազմամեղիս:

Guide of the wanderer, turn me from my evil habits unto good ways, and clench to my soul the recollection of the awful day of my death, the fear of hell, and the love of Thy kingdom, that I may repent of my sins and do that which is righteous; have mercy upon thy creatures and upon me a great sinner.

18 -

Աղբիւր անմահութեան, աղբերացո ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխարութեան որպէս պոռնկին, զի լուացից զմեղս անձին իմոյ՝ յառաջ քան զելանելն իմ յաշխարհէս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Աղբիւր անմահութեան, աղբիւրի պէս իմ սրտէս ալ հոսեցուր արցունքն ապաշխարութեան, ինչպէս պոռնիկ կնոջ աչքերէն, որպէս զի լուամ մեղքերն հոգիիս այս աշխարհէն ելլելէս առաջ. եւ ողորմէ՛ քու արարածներուդ եւ ինձ՝ բազմամեղիս:

Fountain of immortality, let my heart gush forth tears of repentance like those of the adulteress, that I may wash my sins before I depart from this world; have mercy upon Thy creatures and upon me a great sinner.

19 -

Պարգեւիչ ողորմութեան, պարգեւեա ինձ ուղղափառ հաւատով եւ բարի գործով, եւ սուրբ մարմնոյ եւ արեան քո հաղորդութեամբ զաւան ջեզ. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

Պարգեւիչ ողորմութեան, պարգեւէ ինձ որ ուղղափառ հաւատքով, բարի գործերով, եւ Սուրբ Մարմնիդ ու Արիւնիդ հաղորդուելով՝ եւ կարենամ ջեզի գալ. եւ ողորմէ՛ քու արարածներուդ եւ ինձ՝ բազմամեղիս:

Bestower of mercy, grant unto me with orthodox faith and good works, and by the communion of Thy holy Body and Blood to approach Thee; have mercy upon Thy creatures and upon me a great sinner.

20 -

Բարերար Տէր, հրեշտակի բարոյ յանձն արասցես զիս՝ քաղցրութեամբ աւանդել զհոգի իմ եւ անխողով անցուցանել ընդ շարութիւն այսոցն, որք են ի ներքոյ երկնից. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Բարերար Տէր, բարի հրեշտակին յանձնէ զիս՝ որ քաղցրութեամբ աւանդեմ հոգիս եւ անխողով կարենամ անցնիլ շարութեան մէջէն սատանաներուն, որոնք կը շրջին երկնքի ներքեւ. եւ ողորմէ՛ քու արարածներուդ եւ ինձ՝ բազմամեղիս:

Beneficent God, put me in the keeping of the good angel, so as cheerfully to commit my soul unto him, and pass without fear through the gloom of the evil ones that are under the heavens; have mercy upon Thy creatures and upon me a great sinner.

21 -

Լոյս ճշմարիտ՝ Քրիստոս, արժանաւորեա զհոգի իմ ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց քոց ի կոչման աւուրն, եւ հանգչել յուսով բարեաց յօթեանս արդարոց, մինչեւ յօր մեծի գալստեան քո. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Լոյս ճշմարիտ՝ Քրիստոս, արժանացո՛ւր իմ հոգիս՝ կոչմանս օրը ուրախութեամբ տեսնելու լոյսը քու փառքիդ, եւ հանգչելու բարեյոյս՝ արդարներու օթեանին մէջ, մինչեւ օրը քու մեծ գալստեանդ. եւ ողորմէ՛ քու արարածներուդ եւ ինձ՝ բազմամեղիս:

True light, O Christ, do Thou make my soul worthy joyfully to see the light of Thy glory on the day of my calling, and to rest with the hope of good things in the abode of the righteous until the day of Thy glorious coming; have mercy upon Thy creatures and upon me a great sinner.

22 -

Դատաւոր արդար, յորժամ գաս փառօր  
 Հօր դատել զկենդանիս եւ զմեռեալս, մի՛  
 մտաներ ի դատաստան ընդ ծառայի քում, այլ  
 փրկեա զիս ի յափտենական հրոյն, եւ լսելի  
 արա ինձ զերանաւէտ կոչումն արդարոց՝  
 յԵրկնից արքայութիւնդ. եւ ողորմեա քո արա-  
 րածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Դատաւոր արդար, երբ Հօր փառքով դուն  
 գաս դատելու ողջերն ու մեռածները, դատի  
 մի՛ մտներ քու ծառայիդ հետ, այլ փրկէ զիս  
 յաւերժական կրակէն, եւ լսելի ըրէ ինձի երա-  
 նաւէտ կոչն արդարներուն՝ մտնելու երկնքի քու  
 արքայութիւնդ. եւ ողորմէ՛ քու արարածներուդ  
 եւ ինձ՝ բազմամեղիս:

Righteous Judge, when Thou comest in the  
 glory of the Father to judge the living and the  
 dead, enter not into judgement with Thy servant,  
 but save me from the eternal fire, and make me  
 worthy to hear the blessed call of the righteous  
 to the kingdom of heaven; have mercy upon thy  
 creatures and upon me a great sinner.

23 -

Ամենողորմ Տէր, ողորմեա ամենայն  
 հաւատացելոց ի քեզ, իմոց եւ օտարաց, ծանօթ  
 թից եւ անծանօթից, կենդանեաց եւ մեռելոց  
 շնորհեա եւ թշնամեաց իմոց եւ ատելելոց  
 զթողութիւն՝ որ առ իս յանցանացն. եւ դարձ  
 զնոսա ի չարեացն զոր ունին վասն իմ, ող  
 ողորմութեան քում արժանի եղիցին. եւ  
 ողորմեա քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Ամենողորմ Տէր, ողորմէ՛ քու բոլոր հաւ  
 տացեալներուդ՝ ինձ ազգական կամ օտ  
 ծանօթ եւ անծանօթ, ողջ կամ անջեցեալ,  
 թողութիւն շնորհէ՛ ինձի հանդէպ յանցապար  
 թշնամիներուս եւ ատելիներուս ալ, եւ դարձ  
 զիրենք՝ իմ դէմ նիւթած չարիքներէն, որ ա  
 ժանանան քու ողորմութեանդ. եւ ողորմէ՛ ք  
 արարածներուդ եւ ինձ՝ բազմամեղիս:

All-merciful Lord, have mercy upon all those that believe in Thee, my neighbours and strangers, my acquaintances and those unknown to me, the living and the dead; grant also to my enemies and to those that despise me, forgiveness of the wrongs they have committed against me, and turn them from the evil thoughts which they cherish against me, in order that they may become worthy of Thy compassion; have mercy upon Thy creatures and upon me a great sinner:

Glorified Lord, accept the supplications of Thy servant and fulfill for good my prayers through the intercession of the holy Mother of God, of St. John the Baptist, of St. Stephen the Protomartyr, of St. Gregory the Illuminator, and of the holy apostles, prophets, doctors of the Church, martyrs, patriarchs, hermits, virgins, anchorites, and of all Thy saints in heaven and on earth, and to Thee, the indivisible Holy Trinity, be ascribed glory and worship, for ever and ever. Amen.

24 -

Փառատրեալ Տէր, ընկալ զաղաչանս ծառայիս քո, եւ կատարեալ ի բարի զխնդրուածս իմ բարեխօսութեամբ սրբուհոյ Աստուածածնին, եւ Յովհաննու Մկրտչին, եւ սրբոյն Ստեփանոսի Նախավկային, եւ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, եւ սրբոց առաքելոց, մարգարէից, վարդապետաց, մարտիրոսաց, հայրապետաց, ճգնաւորաց, կուսանաց, եւ ամենայն սրբոց քոց երկնաւորաց եւ երկրաւորաց: Եւ քեզ փառք եւ երկրպագութիւն անբաժանելի Սուրբ Երրորդութեանդ, յաիտեանս յաիտենից. ամէն:



Փառատրեալ Տէր, ընդուն՛ջ քու ծառայիդ աղօթքներն, եւ հաճոյքով կատարէ խնդրանքներս բարեխօսութեամբ Սուրբ Աստուածածնին, Յովհաննէս Մկրտիչին, Սուրբ Ստեփանոս Նախավկային, Սուրբ Գրիգոր մեր Լուսաւորչին, սուրբ առաքելներուն, մարգարէներուն, վարդապետներուն, մարտիրոսներուն, հայրապետներուն, ճգնաւորներուն, կուսաններուն եւ երկնային ու երկրաւոր քո բոլոր սուրբերոյ: Եւ քեզի փառք, երկրպագութիւն, անբաժանելի Սուրբ Երրորդութեանդ, յաիտեանս յաիտենից. ամէն: